

22
ՄԱՐՏԻ
2020

Luys Lnyju®



EaP | Eastern Partnership



**The Eastern Partnership
beyond 2020:**
Reinforcing Resilience –
an Eastern Partnership
that delivers for all

#strongertogether

ԵՄ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ
«ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 2020
ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈՒ» ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ԵՄ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ «ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 2020 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈՒ» ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	1
«ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ԱԼԳ) ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 2020 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈՒ». ԻՆՁ Է ԵՄ-Ն ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԻՐ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ	2
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	6

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարտի 18-ին Եվրոպական խորհրդարանի, Եվրախորհրդի, Եվրոպական տնտեսական ու սոցիալական հանձնաժողովի և շրջանների հանձնաժողովի կողմից ներկայացվել է «Արևելյան գործընկերության (ԱԼԳ) քաղաքականությունը 2020 թվականից հետո» համատեղ փաստաթուղթը¹: Փաստաթղթում ներկայացված է ԱԼԳ ծրագրի համար ԵՄ նոր, երկարաժամկետ քաղաքականությունը 2020 թվականից հետո և սահմանված են այդ քաղաքականությունից բխող միջոցառումները: Մինչ այժմ ԱԼԳ ուղղությամբ ԵՄ քաղաքականությունը հիմնված էր 2017-ին Բրյուսելում հաստատված «20 թիրախային արդյունք 2020թ. համար»² փաստաթղթի վրա, որի ժամկետը սպառվում է 2020-ի ավարտին:

Մարտի 16-ին «Լոյս» հիմնադրամը հրապարակել էր «ԵՄ Արևելյան գործընկերության ծրագրի հեռանկարները և Հայաստանը» վերնագրով վերլուծությունը: Այդ վերլուծությամբ փորձ էր արվել հասկանալու, թե ԵՄ ԱԼԳ ծրագրի ապագայի վերաբերյալ որ նախագծերն են հիմնականում քննարկվում Եվրոպացիների կողմից, և դրանցից որը իրականանալու ավելի մեծ հնարավորություններ ունի³: Մարտի 18-ին հրապարակված փաստաթուղթն արդեն իսկ որոշակիորեն հստակեցնում է ԱԼԳ ծրագրի նկատմամբ ԵՄ քաղաքականության շուրջ հիմնական մոտեցումները:

Սույն վերլուծությամբ փորձել ենք ուսումնասիրել ԵՄ կողմից ներկայացված փաստաթուղթը, հասկանալ, թե ինչպիսին է լինելու ԱԼԳ ծրագրի նկատմամբ ԵՄ քաղաքականությունը 2020 թվականից հետո: Այդ նպատակով նախ ներկայացնենք փաստաթղթում տեղ գտած հիմնական գաղափարներն ու առաջնահերթությունները, այնուհետև փորձենք հասկանալ, թե ի վերջո ԱԼԳ ծրագիրը ինչ մոդելով է առաջ շարժվելու:

¹ Joint Communication to the European Parliament, the European Council, the Council, the European economic and social committee and the committee of the regions, “Eastern Partnership policy beyond 2020 Reinforcing Resilience - an Eastern Partnership that delivers for all”, Brussels, 18.03.2020, https://eeas.europa.eu/sites/eeas/files/1_en_act_part1_v6.pdf (այցելվել է 22.03.2020թ.):

² “Eastern Partnership - 20 Deliverables for 2020. Focusing on key priorities and tangible results”, Brussels, 09.06.2017, https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/sites/near/files/eap_20_deliverables_for_2020.pdf (այցելվել է 22.03.2020թ.):

³ «ԵՄ Արևելյան գործընկերության ծրագրի հեռանկարները և Հայաստանը», «Լոյս» հիմնադրամ, 16.03.2020, <https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=74> (այցելվել է 22.03.2020թ.):

«ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ԱԼԳ) ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 2020 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈՒ». ԻՆՉ Է ԵՄ-Ն ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԻՐ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾՆԿԵՐՆԵՐԻՆ

Ինչպես նշվեց, այս տարի ավարտվում է «20 թիրախային արդյունք 2020թ. համար» փաստաթղթի ժամկետը, որը ԱԼԳ ուղղությամբ ԵՄ քաղաքականության հիմնական ուղենիշն է: Հաշվի առնելով 2020-ից հետո քաղաքական նոր ուղենիշների սահմանման անհրաժեշտությունը՝ Եվրոպական հանձնաժողովը 2019թ. մայիսից մինչև հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում նախաձեռնել էր ԱԼԳ ապագայի վերաբերյալ քննարկումներ, որոնց արդյունքում 2020թ. մարտի 18-ին Եվրոպական խորհրդարանի, Եվրախորհրդի, Եվրոպական տնտեսական ու սոցիալական հանձնաժողովի և շրջանների հանձնաժողովի կողմից ներկայացվեց «Արևելյան գործընկերության (ԱԼԳ) քաղաքականությունը 2020 թվականից հետո» համատեղ փաստաթուղթը⁴: Փաստաթղթում ներկայացված է ԱԼԳ ծրագրի ուղղությամբ ԵՄ նոր, երկարաժամկետ քաղաքականությունը 2020 թվականից հետո, ինչպես նաև սահմանված են այդ քաղաքականությունից բխող միջոցառումները:

Ինչպես ակնկալվում էր՝ ԵՄ-ն այսուհետև ևս ԱԼԳ քաղաքականության շրջանակներում շեշտը դնելու է «Ավելին՝ ավելի դիմաց, ավելի քիչ՝ քչի դիմաց» սկզբունքի վրա: Սա նշանակում է, որ առաջիկա տարիներին ԱԼԳ երկրների նկատմամբ ԵՄ-ն իր քաղաքականությունը պայմանավորելու է այդ երկրներում իրականացվող բարեփոխումների արդյունավետության և գրանցված առաջընթացի հետ: Ինչ վերաբերում է ԱԼԳ երկրներից յուրաքանչյուրի հետ հետագա համագործակցության բնույթին՝ առաջարկվում է շեշտը դնել երկկողմ համագործակցության ձևաչափերի վրա և կիրառել «հարմարեցված քաղաքականության» մոտեցումը: Սա ենթադրում է, որ ԱԼԳ անդամ երկրներից յուրաքանչյուրի հետ համագործակցությունը հարմարեցվելու է տվյալ երկրի շահերի, հավակնությունների և գրանցած առաջընթացի հետ:

Փաստաթղթում ներկայացված են վերջին 10 տարիներին ԱԼԳ ձեռքբերումները: Նշվում է, որ Գործընկեր երկրների կողմից ավելի մեծ նախաձեռնողականությունը խրախուսելու համար ԵՄ-ն վերանայել է վերջիններիս հետ համագործակցության ձևաչափը: Մասնավորապես, ավելի տեսանելի արդյունքների հասնելու նպատակով ԵՄ-ն այսուհետև ոչ թե ծրագրի վրա հիմնված

⁴ Joint Communication to the European Parliament, the European Council, the Council, the European economic and social committee and the committee of the regions, “Eastern Partnership policy beyond 2020 Reinforcing Resilience - an Eastern Partnership that delivers for all”, Brussels, 18.03.2020, https://eeas.europa.eu/sites/eeas/files/1_en_act_part1_v6.pdf (այցելվել է 22.03.2020թ.):

Ֆինանսական աջակցություն է տրամադրում, այլ աջակցում է իսկապես «վերափոխող բարեփոխումների» քաղաքականությանը: Այսինքն ԵՄ-ն ԱԼԳ երկրներին աջակցություն տրամադրելիս այսուհետ հաշվի է առնելու ոչ թե կոնկրետ ծրագրերը, այլ ընդհանուր բարեփոխումների քաղաքականությունը, հետևաբար ԱԼԳ ողջ գործիքակազմից օգտվելու համար մասնակից երկրների համար շատ կարևոր է լինելու բարեփոխումների հստակ, իրական օրակարգի առկայությունը:

Փաստաթղթում նշված է. «Եվրոպական հարևանության նոր քաղաքականությունը ընդգծում է ավելի մեծ ճկունության անհրաժեշտությունը, որպեսզի ԵՄ-ն և գործընկեր երկրները հնարավորություն ունենան արձագանքել անընդհատ փոփոխվող կարիքներին և հանգամանքներին»: Սա նշանակում է, որ ԱԼԳ քաղաքականության հիմքերում դրվելու են ավելի իրատեսական մոտեցումներ, որոնք հաշվի են առնելու ինչպես ԵՄ ներքին ու արտաքին մարտահրավերները, այնպես էլ ԱԼԳ ծրագրի մասնակից երկրների իրական հնարավորությունները: Պատահական չէ, որ փաստաթղթում խոսք չկա ԱԼԳ երկրների՝ ԵՄ-ին անդամակցելու հեռանկարների մասին:

Առհասարակ ուշագրավ է, որ ԵՄ կողմից ներկայացված այս փաստաթղթում գրեթե բացակայում է աշխարհաքաղաքական բաղադրիչը: Թեև փաստաթղթի որոշ հատվածներում շեշտադրվում է անվտանգության, առաջին հերթին՝ կիբեռանվտանգության, տեղեկատվական անվտանգության ոլորտներում համագործակցության կարևորությունը, ընդհանուր առմամբ այն չունի ակնհայտ հակառուսական ուղղվածություն: Առաջարկվող քաղաքականության մեջ չեն առանձնացվում նաև տարածաշրջանի հակամարտությունների կարգավորման առանձին սկզբունքները և շեշտը դրվում է դրանց բացառապես խաղաղ կարգավորման սկզբունքի վրա:

Փոխարենը նշվում է, որ ԵՄ-ն ԱԼԳ երկրներում իր աջակցությունն ու ազդեցությունը մեծացնելու համար խրախուսելու է միջազգային ֆինանսական ինստիտուտների հետ համագործակցությունը արտաքին ներդրումային պլանի և կառուցվածքային բարեփոխումների շրջանակներում: ԵՄ-ն նաև արդիականացնելու և ամրապնդելու է տեխնիկական աջակցությունը TAIX և Twinning գործիքների շրջանակներում, ինչպես նաև ստեղծելու է ինստիտուցիոնալ կառույցներ, որոնք պետք է արձագանքեն նոր մարտահրավերներին:

Անդրադառնալով «20 թիրախային արդյունք 2020թ. համար» փաստաթղթով սահմանված առաջնահերթությունների շրջանակներում ունեցած ձեռքբերումներին՝ նշվում է, որ առաջընթաց է գրանցվել այդ փաստաթղթով նախատեսված 4 ուղղություններից 3-ում՝ ավելի ամուր տնտեսություն, ավելի ամուր համագործակցություն և ավելի ամուր հասարակություն: Սակայն չորրորդ՝ ավելի

ամուր կառավարման ոլորտում ձեռքբերումները բավարար չեն: Հետևաբար, նոր քաղաքականության շրջանակներում համաձայնություն է ձեռք բերվել, որ շեշտը դրվելու է կառավարման ոլորտում բարեփոխումների՝ մասնավորապես օրենքի գերակայության, կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի, անկախ մեդիայի ու քաղհասարակության դերակատարության ամրապնդման վրա:

2020 թվականից հետո Արևելյան գործընկերության համար առաջարկվում են հետևյալ երկարաժամկետ նպատակները՝

- 1) Միասին՝ հանուն ճկուն, կայուն և ինտեգրված տնտեսությունների.
- 2) Միասին՝ հանուն հաշվետու հաստատությունների, օրենքի գերակայության և անվտանգության.
- 3) Միասին՝ հանուն շրջակա միջավայրի և կլիմայի ճկունության.
- 4) Միասին՝ հանուն ճկուն թվային տրանսֆորմացիայի.
- 5) Միասին՝ հանուն ճկուն, արդար և ներառական հասարակությունների:

Ուշագրավ են հատկապես առաջին 2 ուղղությունները.

Գործընկերություն, որը ստեղծում է. Միասին՝ հանուն ճկուն, կայուն և ինտեգրված տնտեսությունների

Փաստաթղթում նշվում է, որ քաղաքացիների ակնկալիքներն արդարացնելու տեսանկյունից տնտեսության ամրապնդումը ամենակարևոր նշանակությունն ունի: Հետևաբար, ԱԼԳ նոր քաղաքականության առաջնահերթություններից մեկն է համարվում ԵՄ և գործընկեր երկրների միջև առևտրի աճն ու վերջիններիս տնտեսությունների տարածաշրջանային և երկկողմ ինտեգրման հետագա խորացումը: Այստեղ ուշագրավ է, որ շեշտը դրվում է Ասոցացման համաձայնագիրը ստորագրած 3 երկրների հետ տնտեսական ինտեգրման խորացման վրա: Այս երկրների համար նախատեսվում է աստիճանաբար և ոլորտային ինտեգրում ԵՄ տնտեսությանը: Չնայած ՀՀ-ի անդամակցությանը ԵԱՏՄ-ին՝ Հայաստանը պետք է փորձի անմասն չմնալ ԵՄ-ի հետ տնտեսական հարաբերությունների խորացման նոր հնարավորություններից:

Նշվում է, որ ԵՄ-ն փորձելու է աջակցել ԱԼԳ երկրների տնտեսական բարեփոխումներին՝ Արտաքին ներդրումների պլանի և Կառուցվածքային բարեփոխումների մեխանիզմի միջոցով: Հաշվի առնելով Հայաստանում օտարերկրյա ներդրումների հետ կապված խնդիրը, ԵՄ կողմից առաջարկվող գործիքակազմից ճիշտ օգտվելու դեպքում հնարավոր է որոշակի մեղմել առկա մտահոգիչ իրավիճակը:

Միաժամանակ, ԵՄ կողմից ներկայացված փաստաթղթում մեծ կարևորություն է տրվում ԱԼԳ երկրների հետ ենթակառուցվածքների ոլորտում համագործակցությանը: Մասնավորապես կարևորվում է համագործակցությունը տրանսպորտային ենթակառուցվածքների ոլորտում՝ TEN-T նախաձեռնության շրջանակներում, ինչպես նաև էներգետիկ ենթակառուցվածքների ոլորտում: Ուշագրավ է Ադրբեջանի հետ էներգետիկ համագործակցության շրջանակներում Հարավային գազային միջանցքի (ՀԳՄ) հատուկ շեշտադրումը և այդ ծրագրի կարևորության ընդգծումը: Ակնհայտ է, որ ԵՄ կողմից որդեգրված նոր, ավելի իրատեսական քաղաքականությունը հաշվի է առնելու երկկողմ ձևաչափում առկա տարբեր բաղադրիչներ, և ՀԳՄ առկայությունը կարող է Ադրբեջանին որոշակի դիրքային առավելություն տալ: Միաժամանակ, Հայաստանը կարող է օգտվել ԱԼԳ շրջանակներում ԵՄ կողմից առաջարկվող այնպիսի աջակցությունից, որի նպատակն է գործընկեր երկրների էներգետիկ անվտանգության ամրապնդումը, մասնավորապես՝ աջակցությունը վերականգնվող էներգիայի, էներգախնայողության ոլորտներում:

Գործընկերություն, որը պաշտպանում է. Միասին՝ հանուն հաշվետու հաստատությունների, օրենքի գերակայության և անվտանգության

Այս ուղղությամբ առաջարկվող քաղաքականության շրջանակներում ի թիվս այլոց, կարևորվում է նաև աջակցությունը հակամարտություններից տուժած բնակչությանը: Ադրբեջանը կարող է պարբերաբար բարձրաձայնել իր փախստականների հետ կապված խնդիրները և, օգտագործելով Վրաստանում ու Ուկրաինայում առկա հակամարտությունների պարագայում ԵՄ ավանդական աջակցությունը տարածքային ամբողջականության սկզբունքին, փորձել ավելի բարենպաստ դիրքավորում ապահովել: Չնայած ներկայացված նոր քաղաքականության մեջ ԵՄ-ն խուսափել է հակամարտությունների կարգավորման սկզբունքների շուրջ ընտրովի մոտեցումից, ամեն դեպքում հարկավոր է լուրջ աշխատանք տանել, որպեսզի այսուհետ նույնպես ԵՄ-ն շարունակի պահպանել ԼՂ հակամարտության վերաբերյալ տարբերակված մոտեցումը: Միաժամանակ, հարկավոր է փորձել հակամարտություններից տուժած բնակչության աջակցության շրջանակներում հասնել ԵՄ կողմից Արցախի բնակչությանը և Ադրբեջանից արտագաղթած հայ փախստականներին աջակցության ապահովմանը:

Անդրադառնալով դատական բարեփոխումներին՝ փաստաթղթում նշվում է, որ դրանք իրականացնելիս պետք է հավատարիմ մնալ եվրոպական սկզբունքներին: Կարևորվում է նաև դատական և քննչական համակարգերի անկախությունն ու հաշվետվողականությունը: Նշվում է, որ ԵՄ-ն խրախուսելու է այդ բարեփոխումների ընթացքում միջազգային ինստիտուտների և փորձագետների աջակցությունը, ինչպես նաև հետևելու է, որ բարեփոխումները

հիմնված լինեն բարձրորակ բարեփոխումային ռազմավարությունների վրա: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ ԵՄ-ն չի խրախուսելու դատական համակարգի նկատմամբ անտրամաբանական և հապճեպ միջամտությունները, միջազգային կառույցների տեսակետներն անարձագանք թողնելու փորձերը:

Համագործակցությունը մյուս 3 ոլորտներում

Համագործակցության մյուս ոլորտներն են՝ Միասին՝ հանուն շրջակա միջավայրի և կլիմայի ճկունության (գործընկերություն, որը կանաչեցնում է), Միասին՝ հանուն ճկուն թվային տրանսֆորմացիայի (գործընկերություն, որը կապ է ապահովում), Միասին՝ հանուն ճկուն, արդար և ներառական հասարակությունների (գործընկերություն, որը հզորացնում է): Այս ոլորտներում ևս առաջարկվում են համագործակցության խորացման տարբեր մեխանիզմներ:

Փաստաթղթում անդրադարձ է կատարվում նաև մուտքի արտոնագրերի ազատականացման հարցին: Ինչպես և կարելի էր ակնկալել, այս հարցում ԵՄ-ն ավելի խիստ մոտեցում է որդեգրել: Կարևորելով մուտքի արտոնագրերի ազատականացումը Ասոցացման համաձայնագիրը չստորագրած երկրների համար՝ միաժամանակ, ԱԼԳ նոր քաղաքականության շրջանակներում շեշտադրվում է ռեադմիսիայի համաձայնագրերի իրականացումը և հետագա ազատականացումը կապվում հենց այդ ոլորտում առաջընթացի հետ:

Ի վերջո նշվում է, որ փաստաթուղթը կներկայացվի 2020 թվականի հունիսին կայանալիք Արևելյան գործընկերության գագաթնաժողովի ժամանակ: ԱԼԳ գագաթնաժողովը կապահովի մանդատ՝ մշակելու թիրախային արդյունքների նոր փաթեթ՝ նպատակ ունենալով այս փաստաթղթում ներկայացված առաջարկությունները դնել գործնական հունի մեջ: Նոր թիրախային արդյունքները պետք է մշակվեն 2020թ. երկրորդ կեսին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական խորհրդարանի, Եվրոխորհրդի, Եվրոպական տնտեսական ու սոցիալական հանձնաժողովի և շրջանների հանձնաժողովի կողմից ներկայացված «Արևելյան գործընկերության (ԱԼԳ) քաղաքականությունը 2020 թվականից հետո» համատեղ փաստաթղթի վերլուծությունը թույլ է տալիս հանգել մի շարք եզրակացությունների: Այս փաստաթուղթը առաջին հերթին ուղենշում է ԱԼԳ ապագայի նկատմամբ նոր քաղաքականության հիմնական առաջնահերթությունները, սակայն այդ քաղաքականությունը ավելի կոնկրետ, հստակ տեսք կստանա միայն հունիսին կայանալիք՝ Արևելյան գործընկերության գագաթնաժողովից հետո կամ 2020թ. երկրորդ կեսին, երբ կմշակվի 2020 թվականից հետո ԱԼԳ նոր թիրախային արդյունքների փաթեթը:

Թեև վերոհիշյալ փաստաթղթում կոնկրետ չի նշվում, թե ԱԼԳ ծրագրի զարգացման մոդելը ինչպիսի առանձնացված մոտեցում է նախատեսում Ասոցացման համաձայնագիրը ստորագրած և չստորագրած երկրների համար, այնուամենայնիվ, փաստաթղթում ուրվագծված քաղաքական առաջնահերթություններից նկատելի է դառնում, որ շեշտը դրվելու է ասոցացված երեք երկրների նկատմամբ առանձնահատուկ քաղաքականության վրա: Այսպես կոչված «Եռյակը» (Վրաստան, Ուկրաինա, Մոլդովա) առաջիկա տարիներին ԵՄ կողմից առանձնահատուկ վերաբերմունքի է արժանանալու, իսկ Հայաստանը կարող է Ադրբեջանի և Բելառուսի հետ միասին հայտնվել ԱԼԳ երկրների ոչ ցանկալի «զամբյուղում»: Միաժամանակ, հաշվի առնելով նաև «Ավելին՝ ավելի դիմաց, ավելի քիչ՝ քիչ դիմաց» մոտեցումը, ԱԼԳ անդամ երկրներից յուրաքանչյուրը պետք է անհատական ջանքեր գործադրի ասոցացված «Եռյակից» չկտրվելու և ԱԼԳ շրջանակներում «առաջապահների» շարքում մնալու նպատակով:

Քանի որ ԵՄ-ն առաջիկա տարիներին ԱԼԳ շրջանակներում համագործակցության հարցում շեշտը դնելու է երկկողմ ձևաչափի վրա, կարևոր է այդ ձևաչափում ԵՄ տարբեր կառույցների հետ արդյունավետ շփումները պահպանելը: Հարկավոր է նաև մեծ ջանքեր գործադրել, որպեսզի ի տարբերություն Ասոցացման համաձայնագիրը չստորագրած մյուս երկրների՝ Ադրբեջանի ու Բելառուսի, առնվազն ապահովվի Հայաստանի նկատմամբ տարբերակված մոտեցումը, հետևաբար՝ նաև համագործակցության ավելի լայն օրակարգը:

ԵՄ-ի և ԱԼԳ երկրների միջև համագործակցության հիմնական ոլորտները առաջիկա տարիներին լինելու են կառավարումը, օրենքի գերակայությունը, կոռուպցիայի դեմ պայքարը և անկախ լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության դերը⁵: Կարելի է ենթադրել, որ այս ոլորտներին է ուղղվելու նաև ԵՄ հիմնական ֆինանսական աջակցությունը: Միաժամանակ, ԵՄ կողմից ավելի է կարևորվելու ԱԼԳ երկրների հետ համագործակցությունը էներգետիկ, տրանսպորտային ենթակառուցվածքների ոլորտում: Նախ հարկավոր է չեզոքացնել Հարավային գազային միջանցքի շնորհիվ ԱԼԳ շրջանակներում քաղաքական առավելություն ստանալու Ադրբեջանի հնարավոր փորձերը: Միաժամանակ պետք է ակտիվ աշխատանք տարվի, որպեսզի ԱԼԳ գործիքները խելամտորեն օգտագործվեն՝ ՀՀ-ում մի շարք ենթակառուցվածքային ծրագրերի համար ֆինանսատեխնիկական աջակցություն ապահովելու նպատակով:

⁵ “JOINT STAFF WORKING DOCUMENT, Structured Consultation on the future of the Eastern Partnership”, Brussels, 18.03.2020, https://eeas.europa.eu/sites/eeas/files/jswd_structured_consultation_on_the_future_of_the_eastern_partnership.pdf (այցելվել է 22.03.2020թ.):

Դեռ հստակեցված չեն ԱԼԳ քաղաքականության իրագործման մեխանիզմներն ու ֆինանսական բազմամյա շրջանակը: Սա նշանակում է, որ ԱԼԳ շրջանակներում ՀՀ-ի համար նախատեսվող աջակցության ուղղություններն ու ֆինանսավորումը դեռևս գտնվում է մշակման փուլում: Հաշվի առնելով ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ուժի մեջ մտնելու փաստը՝ պետք է փորձել ԱԼԳ ֆինանսական գործիքները ավելի հասանելի դարձնել Հայաստանի համար՝ առաջին հերթին ներդրումների ու ենթակառուցվածքների զարգացման ոլորտներում: Միաժամանակ ՀԸԳՀ-ի վավերացումը ԵՄ բոլոր երկրների կողմից՝ նախքան հունիսին կայանալիք գազաթնաժողովը, կարող է Հայաստանի համար լրացուցիչ բանակցային առավելություն ապահովել:

Ինչպես նշել էինք մեր հրապարակած նախորդ վերլուծության մեջ՝ ԱԼԳ ծրագրի 2020-ից հետո նոր ռազմավարության շրջանակներում ՀՀ-ի համար ավելի նպաստավոր պայմաններ ապահովելու հարցում կարող են խոչընդոտներ ստեղծել նաև երկրում առկա իրավիճակը քաղաքական, դատաիրավական ասպարեզներում: Ժողովրդավարական զարգացման ուղուց ՀՀ իշխանությունների կողմից ցանկացած շեղում ԵՄ երկրների կողմից կարող է գնահատվել որպես հետընթաց, ինչը բնականաբար բացասական ազդեցություն կունենա ԱԼԳ շրջանակներում ՀՀ-ի նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունքի վրա: ԵԽԽՎ Հայաստանի հարցով համազեկուցողների, Վենետիկի հանձնաժողովի, մի շարք ազդեցիկ եվրոպական քաղաքական ուժերի կողմից վերջին շրջանում բարձրաձայնվող մտահոգությունները առաջին ազդակներն էին: Այժմ այս մոտեցումը ամրագրված է նաև ԱԼԳ վերաբերյալ ԵՄ նոր քաղաքականության մեջ, հետևաբար հարկավոր է հնարավորինս խուսափել այս ուղղությամբ նոր սխալներից և փորձել շտկել նախկինները:

Ի տարբերություն Ադրբեջանի և Բելառուսի՝ Հայաստանի հանդեպ տարբերակված մոտեցման կարևոր արտացոլումը կարող է լինել մուտքի արտոնագրերի ազատականացման գործընթացի արագ մեկնարկը և տրամաբանական ավարտը: Հարկավոր է ջանքեր գործադրել, որպեսզի այն տեղի ունենա առնվազն ԱԼԳ հերթական գազաթնաժողովի ժամանակ: Սա նաև թույլ կտա որոշակի ստվեր գցել ԵՄ-Ադրբեջան սպասվող համաձայնագրի վրա:

Ընդհանուր առմամբ, ԵՄ կողմից ներկայացված նոր քաղաքականության մեջ ըստ էության ավելի քիչ տեղ է հատկացված աշխարհաքաղաքական բաղադրիչին: Սա դրական հանգամանք է, քանի որ ՌԴ-Արևմուտք հնարավոր բախումների տեսանկյունից այն կարող է ապահովել ավելի ճկուն միջավայր: Առաջարկվող քաղաքականության մեջ հղում չի արվում նաև տարածաշրջանի հակամարտությունների կարգավորման առանձին սկզբունքների վրա՝

բացառությամբ խաղաղ կարգավորման սկզբունքի: Սա նույնպես դրական հանգամանք է, և ցույց է տալիս տարածաշրջանի հակամարտությունների նկատմամբ ԵՄ տարբերակված քաղաքականությունը:

ԵՄ կողմից ներկայացված այս նոր քաղաքականության վերլուծությունը ցույց է տալիս, որ ԵՄ Արևելյան գործընկերությունը, որը ի սկզբանե շրջանառության մեջ էր դրվել որպես աշխարհաքաղաքական նախագիծ, աստիճանաբար տրանսֆորմացվում է եվրոպական իրական փափուկ ուժի (soft power): Հաշվի առնելով Կորոնավիրուսի համաճարակի տարածման հետևանքով առաջացած մարտահրավերները, որոնք գումարվել են մինչ այդ արդեն իսկ առկա բազմաթիվ այլ խնդիրներին, ԵՄ-ը՝ ինքն էլ կանգնած է լուրջ ճգնաժամի առջև: ԵՄ-ում բազմաթիվ խնդիրներ են առաջացել եվրոպական ինստիտուտների գործունեության, անդամ երկրների նկատմամբ վերաբերմունքի դրսևորման, ԵՄ քաղաքականության աջակցության տեսանկյունից:

Թե որքանով է իրատեսական այս փաստաթուղթը, հատկապես՝ Կորոնավիրուսի համաճարակի համատեքստում, այժմ դժվար է կանխատեսել: Ակնհայտ է, որ ստեղծված իրավիճակում ԵՄ-ն որոշումների կայացման գործընթացում, ինչպես նաև ֆինանսական ոլորտում մի շարք խնդիրներ է ունենալու, ինչը նշանակում է, որ ԱԼԳ ծրագիրը առնվազն ժամանակավորապես դուրս է մնալու ԵՄ առաջնահերթությունների շարքից: Կարելի է միայն վստահաբար նշել, որ այս փաստաթուղթը առաջարկում է որոշակի հեռանկար, որի հետագա ճակատագիրը պարզ կդառնա միայն ԵՄ-ում և աշխարհում ստեղծված ճգնաժամի հաղթահարումից հետո:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: